ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2023 թվականի N 1486 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 216-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Սահմանել հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների (տնօրեն, տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակ-

ցությունների գծով տեղակալ, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ) պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը՝ համաձայն N 3 հավելվածի:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով՝

«5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» N 1391-Ն որոշումը:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով՝

«6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ աշխատանքային օրը, N 1 հավելվածով սահմանված՝ «Տնօրեն՝ հանրակրթական ուսումնական հաստատության», «Համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների» և «Համակարգող՝ հանրակրթական ուսումնական հաստատության» մասերը տարածվում են հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող բոլոր այն ուսումնական հաստատությունների վրա, որոնք անցում են կատարում «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի:».

4) լրացնել նոր՝ N 3 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Որոշման N 1 հավելվածի՝

1) 1-ին՝ «Տնօրեն՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի 1-ին կետի՝

ա. 15-րդ ենթակետում «սովորողներին» բառը փոխարինել «սովորողների կազմը» բառերով.

բ. «կրթական ծրագրեր» բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «հանրակրթական ծրագրերի» բառերով,

գ. «երեխա» բառը (բացառությամբ իրավական ակտերի վերնագրերի) բոլոր հոլովաձևերով փոխարինել «սովորող» բառով՝ համապատասխան հոլովաձևերով,

դ. 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8) կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ ԴԿՏՀ) ձևավորում և հաստատում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հաստիքների կազմը»,

ե. 17-րդ ենթակետը «համակարգման նկատմամբ,» բառերից հետո լրացնել «Հաստատությունում նոր չափորոշչով ուսուցում իրականացվող դասարանների ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար կազմակերպվող երկարօրյա պարապմունքների բնականոն գործունեության ապահովման նկատմամբ,» բառերով,

զ. 18-րդ ենթակետից հանել «ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, ներդպրոցական վերահսկողության պլանը,» բառերը,

է. 21-րդ կետում «դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ ԴԿՏՀ)» բառերը փոխարինել «ԴԿՏՀ-ում» բառով.

2) 4-րդ՝ «Ուսուցիչ՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի 1-ին կետի 3-րդ ենթակետը «դասերի» բառից հետո լրացնել «, ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար կազմակերպվող երկարօրյա պարապմունքների» բառերով.

3) 7-րդ՝ «Սոցիալական մանկավարժ՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի 1-ին կետի 17-րդ ենթակետում «հետ» բառը փոխարինել «, Հաստատության, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի և մասնագիտացված ուսումնական հաստատության հետ՝ բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողներին կրթական աջակցություն տրամադրելու նպատակով:» բառերով.

4) 13-րդ՝ «Խմբակավար՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի 3-րդ կետում «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով:

3. «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական աշխատողների պաշտոնների»՝

1) անվանացանկի 1-ին կետում և «Նկարագիր» բաժնի 1-ին գլխի վերնագրում «Համակարգող» բառից առաջ լրացնել «Վարչատնտեսական մասի» բառերը, նույն գլխի 1-ին կետի 1-ին ենթակետում «Համակարգողն» բառը փոխարինել «վարչատնտեսական մասի համակարգողն (այսուհետ՝ Համակարգող)» բառերով.

2) «Համակարգող՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի՝

ա. 1-ին կետի 3-րդ ենթակետից հանել «, արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը» բառերը,

բ. 1-ին կետի 25-րդ ենթակետում «սույն կանոնադրությամբ» բառերը փոխարինել «սույն հավելվածով» բառերով,

գ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Հաստատության համակարգողի պաշտոնը կարող է զբաղեցնել «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող անձը:».

3) անվանացանկի 2-րդ կետում և «Նկարագիր» բաժնի 2-րդ գլխի վերնագրում «Հաշվապահ՝ հանրակրթական ուսումնական հաստատության» բառերը փոխարինել «Գլխավոր հաշվապահ՝ հանրակրթական ուսումնական հաստատության» բառերով, նույն գլխի 1-ին կետի 10-րդ ենթակետից հետո «Հաշվապահն» բառը փոխարինել «Գլխավոր հաշվապահն (այսուհետ՝ հաշվապահ)» բառերով.

4) «Հաշվապահ՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի 1-ին՝ «Աշխատանքային գործառույթները» կետի 6-րդ ենթակետից «և վարկային» բառերը հանել.

5) «Հաշվապահ՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի 1-ին՝ «Աշխատանքային գործառույթները» կետի՝

ա. 7-րդ ենթակետից «արտադրանքի ինքնարժեքի,» և «փոխառությունների գծով բանկային պարտավորությունների սահմանված ժամկետում մարումը,» բառերը հանել,

բ. 9-րդ ենթակետից «դրամարկղային կարգապահության,» բառերը հանել.

6) անվանացանկի 4-րդ կետում և «Նկարագիր» բաժնի 4-րդ գլխի վերնագրում և նույն գլխի ամբողջ տեքստում «Մաքրուհի» բառը բոլոր հոլովաձևերով փոխարինել «Հավաքարար» բառով.

7) անվանացանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ կետով՝

«10. Անձնակազմի կառավարման մասնագետ՝ հանրակրթական ուսումնական հաստատության».

8) «Նկարագիր» բաժինը 9-րդ գլխից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ գլխով՝

«10. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

1. Աշխատանքային գործառույթները՝

1) կազմում է Հաստատությունում աշխատողների հետ կապված հրամանների նախագծերը.

2) վարում է Հաստատության էլեկտրոնային հրամանագիրքը.

3) մշակում է Հաստատության աշխատողների հաշվառման, գրանցման, աշխատանքային պայմանագրերի նախագծերի կազմման, այդ գործառույթների կատարման հետ կապված այլ փաստաթղթեր.

4) սահմանված կարգով վարում է Հաստատության աշխատողների անձնական գործերը, դրանցում կատարում է փոփոխություններ.

5) իրականացնում է աշխատանքային պայմանագրերի կազմում, հաշվառում և պահպանում.

6) կատարում է անձնակազմի հետ կապված փաստաթղթերի արխիվացման աշխատանքներ.

7) ապահովում է անձնակազմի հետ կապված պաշտոնական գրությունների, հանձնարարականների և հրամանների կազմումը, հրապարակումը կամ ծանուցումը.

8) ապահովում է Հաստատության կառուցվածքային, հաստիքային պաշտոնների անվանացանկում փոփոխությունների նախապատրաստումը.

9) իրականացնում է Հաստատության թափուր հաստիքների համալրման նպատակով համապատասխան աշխատանքներ (հայտարարության կազմում, աշխատանքի համար դիմած անձանց տվյալների հավաքագրում և համակարգում, հարցազրույցի կազմակերպում, ընդունվող քաղաքացու անձնական գործի կազմում.

10) իրականացնում է աշխատանքի ընդունվողի անձնական գործի բացում.

11) իրականացնում է աշխատանքային հարաբերությունների հետ կապված առաջարկությունների, դիմումների, բողոքների ընդունում, Հաստատության տնօրենի հետ քննարկումների կազմակերպում և լուծումների առաջադրում (անձանց աշխատանքի ընդունում, այլ աշխատանքի տեղափոխում, փոխադրում, աշխատանքից ազատում և այլն).

12) իրականացնում է Հաստատության աշխատակիցների ամենամյա արձակուրդների ժամանակացույցների կազմումը և ապահովում է դրանց կատարման վերահսկողությունը.

13) ապահովում է հրապարակման և ծանուցման ենթակա ներքին և անհատական իրավական ակտերի և փաստաթղթերի հրապարակումը և ծանուցումը:

2. Անձնակազմի կառավարման մասնագետի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) անձնակազմի կառավարման մասնագետի պաշտոնն զբաղեցնողը պետք է տիրապետի համակարգչով և ժամանակակից տեխնիկայի այլ միջոցներով աշխատելու հմտություններին.

2) պետք է իմանա նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.

3) պետք է իմանա Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ աշխատանքային օրենսդրության հիմունքները, քաղաքացիական իրավունքի հիմունքները, անձնակազմին առնչվող գործավարություն, անձնակազմի կառավարման փաստաթղթերի ձևակերպման, համապատասխան գրանցամատյաններում գրանցումների և անձնական գործերի վարման պահանջները.

4) իր գործունեության ընթացքում անձնակազմի կառավարման մասնագետն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ, Հաստատության կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով (դրա առկայության դեպքում), Հաստատության ներքին կարգապահական կանոններով, հրամաններով և կարգադրություններով:

3. Որակավորման նվազագույն պահանջները՝

Հաստատության անձնակազմի կառավարման մասնագետի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն և առնվազն 1 տարվա համապատասխան աշխատանքային ստաժ:»:

4. Որոշման N 2 հավելվածի՝

1) «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողների պաշտոնների» «Նկարագրեր» բաժնի՝

ա. «Սոցիալական մանկավարժ՝ Կենտրոնի» գլխի 3-րդ՝ «Որակավորման նվազագույն պահանջները» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Կենտրոնի սոցիալական մանկավարժի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն («Սոցիալական մանկավարժություն», «Սոցիալական աշխատանք» մասնագիտությունների որակավորմամբ:»,

բ. «Հոգեբան՝ Կենտրոնի» գլխի 3-րդ՝ «Որակավորման նվազագույն պահանջները» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Կենտրոնի հոգեբանը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:».

2) «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի վարչատնտեսական աշխատողների պաշտոնների»՝

ա. «Անվանացանկ» բաժնի 1-ին կետում, «Նկարագիր» բաժնի 1-ին գլխի վերնագրում «Հաշվապահ» բառը փոխարինել «Գլխավոր հաշվապահ» բառերով, 1-ին կետի 1-ին ենթակետը «իրականացնում է» բառերից առաջ լրացնել «Գլխավոր հաշվապահն (այսուհետ՝ հաշվապահ)» բառերով,

բ. 3-րդ ենթակետում «կազմակերպության» բառը փոխարինել «Կենտրոնի» բառով,

գ. «Նկարագրեր» բաժնի 3-րդ՝ «Հաշվապահ՝ կենտրոնի» գլխի «Որակավորման նվազագույն պահանջները» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Կենտրոնի հաշվապահի պաշտոնը կարող է զբաղեցնել հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող կամ վերջին հինգ տարվա ընթացքում հաշվապահի՝ առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ ունեցող անձը։»,

դ. «Անվանացանկ» բաժնի 2-րդ կետում «Տեսուչ կադրերի գծով», «Նկարագիր» բաժնի 2-րդ գլխի վերնագրում և նույն գլխի ամբողջ տեքստում «Տեսուչ կադրերի գծով», «կադրերի գծով տեսուչ», «կադրերի տեսուչ», բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «Անձնակազմի կառավարման մասնագետ» բառերով.

3) «Անվանացանկ» բաժնի 6-րդ կետում, «Նկարագիր» բաժնի 6-րդ գլխի վերնագրում և նույն գլխի ամբողջ տեքստում «Մաքրուհի» բառը բոլոր հոլովաձևերով փոխարինել «Հավաքարար» բառով։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ